ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2015 թ. N 913-Ն

ք. Ստեփանակերտ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի դեկտեմբերի 28-ի
N 913-Ն որոշման

# Ց Ա Ն Կ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### 1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Թ. ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| 0402 | Մանկաբարձական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 0405 | Դեղագործություն (միջնակարգ կրթությամբ) |
| 0406 | Քույրական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 0418 | Բուժական գործ զինված ուժերում (հիմնական կրթությամբ) |

### 2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| 0501 | Գործիքային կատարողական արվեստ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)<br>*այդ թվում՝*<br>դաշնամուր<br>լարային գործիքներ<br>փողային գործիքներ<br>ժողովրդական գործիքներ |
| 0502 | Երգեցողություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 0503 | Երգչախմբավարություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 0504 | Երաժշտության տեսություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 0505 | Էստրադային երաժշտարվեստ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |

## 3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

### 3.1 ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| 0514 | Դիզայն ըստ ճյուղերի (հիմնական կրթությամբ) |
| 0515 | Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ ըստ ճյուղերի (հիմնական կրթությամբ) |
| 0518 | Սոցիալ-մշակութային գործունեություն և ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն (հիմնական կրթությամբ) |
| 2014 | Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (հիմնական կրթությամբ) |
| 2307 | Զբոսաշրջություն (հիմնական կրթությամբ) |

### 3.2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| 0517 | Գրադարանային գործ (միջնակարգ կրթությամբ) |
| 0601 | Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (միջնակարգ կրթությամբ) |

## 4.ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ
### (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| 0319 | Պարի ուսուցում (միջնակարգ կրթությամբ) |
| 0509 | Պարարվեստ (ժողովրդական պար) (հիմնական կրթությամբ) |

## 5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
### (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| 1105 | Մետաղների մշակման տեխնոլոգիա ճնշմամբ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 1210 | Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2203 | Համակարգիչների շահագործում (միջնակարգ կրթությամբ) |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2311 | Հասարակական սնունդ (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |

| | |
|---|---|
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2603 | Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա (միջնակարգ կրթությամբ) |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ) |

## 6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| 1207 | Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ) |
| 2203 | Համակարգիչների շահագործում (հիմնական կրթությամբ) |
| 2304 | Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2311 | Հասարակական սնունդ (միջնակարգ կրթությամբ) |
| 2401 | Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական կրթությամբ) |
| 2809 | Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական և միջնակարգ կրթությամբ) |
| 2905 | Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (տրակտորիստ) (հիմնական կրթությամբ) |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ) |

## 7. ՇՈՒՇԻԻ «ԵՂՆԻԿ ՄՈՂՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

| Դասիչը | Մասնագիտությունը |
|---|---|
| *1003* | *Մեքենաների և մեխանիզմների էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում (հիմնական կրթությամբ)* |
| 1006 | Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (հիմնական կրթությամբ) |
| 1210 | Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա (հիմնական կրթությամբ) |
| 2902 | Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ) |
| 2908 | Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ) |

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ** **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**